«Մամուլ» խափանեալ զաւեշտաթերթի արտօնատէր Գէորգ Էֆէնտի Այվազեան, որոյ ներման շնորհ ստանալը ծանուցած եմք, երկուշաբթի մայրաքաղաքս վերադարձաւ իւր միակ որդեկին հետ, և ուղղակի առ Ս. Պատրիարք Հայրն երթալով՝ շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբազնութեան ջանից համար։ Միտիլիի կառավարիչն և վարչական ժողովը Այվազեան Էֆէնտիի պարկեշտ ու հանդարտ կենցաղավարութեան համար վկայագիր մը տուեր են։ Կղզուն Ցունաց Մետրապոլիտն՝ որ բարերարած է Այվազեան Էֆէնտիի, նորա և որդւոյն ճանապարհի ծախքն ալ վճարեր է։

—

Ռնիկ Կարնեցի, և ապա ի Սիլեկիա բնակեալ Սէրովբէեան Մ. Գրիգոր անուն ազգային մը երկու տարիէ հետէ անյայտ եղած է։ Սորա ո՛ւր, ողջ կամ մեռեալ լինելուն վրայ ծանօթութիւն ունեցողները կը հրաւիրուին՝ անյապաղ իմացնել Պատրիարքարանի։

—

Գեր. Տ. Մովսէս Ծ. վարդապետ Կէօմրիւրճեան մայրաքաղաքս դարձաւ Բաղէշէն. հրաժարելով Զմշկածագի հովուական պաշտօնէն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 29 Հոկտ. ընդ համարաւ 642 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Բագուաբնակ հայազգի ժողովրդոց Շամախւոյ պատուելիք՝ Համբարձում-բէկն Իւզբաշեանց, Մովսէս-բէկն Սարուխեանց և Հայրապետն Քօչարեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 6 Նոյեմբ. ընդ համարաւ 657 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Ս. Երրորդութեան եկեղեցւոյ Հայոց Ներքին-Ագուլեաց բարեկրօն Ցակոբ քահանայն Տէր Անդրէասեանց և պատուելիք երեցփոխան Պօղոսն Աղամալեանց և Մինասն Նունուսեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 6 Նոյեմբ. ընդ համարաւ 658 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան աղջկանաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Մեծ-Ղարաքիլիսա գեղջ բարեկրօն Խորէն քահանայն Խանդամեանց և պատուելիք երեցփոխան Առտուածատուրն Գէորգեան և Սօսն Արսէնեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 6 Նոյեմբ. ընդ համարաւ 659 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան Օրիորդական ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց

Մեծ - Դարաբիլիսա գեղջ՝ բարեկրօն Արսէն աւագ քահանայն Տէր Սիմէոնեան և պատուելիք երեցփոխան Աստուածատուրն Գէորգեան և Յովակիմն Նալբանդեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 12 Նոյեմբ. ընդ համարաւ 674
հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական ծխական երկսոից ուսումնարանաց Նուխի քաղաքի՝ պատուելիք Կոյլեժսկի սեկրետար Գրիգորն Մարգարեանց, կոյլեժսկի Ասեսսոր Դաւիթն Սարգսեանց, քննիչ Յակոբն Տէր Խաչատրեանց Խաչատուրն Խօջամիրեանց և Ալէքսանդրն Նասիբեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 22 Նոյեմբ. ընդ համարաւ 675
հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական - ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Նիժ գեղջ յաջորդութեանն Նուխւոյ՝ բարեկրօն Սարգիս քահանայն Խամնյեանց և պատուելիք երեցփոխանքն Թովմասն Ճոտանեանց, Մ Մովսէսն Բալբէլեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 12 Նոյեմբ. ընդ համարաւ 676
հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական - ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Վարդաշէն գեղջ յաջորդութեանն Նուխւոյ՝ բարեկրօն Յարութիւն քահանայն Թարխանեանց և պատուելիք երեցփոխան Պետրոսն Խաչատրեան և Յարութիւնն Ենգալանեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 12 Նոյեմբ. ընդ համարաւ 677
հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Սուլթան Նուխի գեղջ՝ յաջորդութեանն Նուխւոյ բարեկրօն Աւետիս քահանայն Տէր Իսրայէլեան և պատուելիք երեցփոխան գպիր Գրիգորն Տէր Իսրայէլեանց և Յարութիւնն Յովհաննիսեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 12 Նոյեմբ. ընդ համարաւ 678
հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական - ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Ամիրվան գեղջ յաջորդութեանն Նուխւոյ՝ պատուելիք Խաչանն Յակոբեան Յարութիւնեանց և Կերասիմն Պետրոսեան Մովսիսեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 20 Նոյեմբ. ընդ համարաւ 700
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական - ծխական միդասեան արականաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Ազքիլիսա գեղջ՝ բարեկրօն Խաչատուր քահանայն Տէր Գէորգեանց և պատուելիք՝ երեցփոխան Վարդանն Իսկենդարեանց և Յարութիւնն Յակոբեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 20 Նոյեմբ. ընդ համարաւ 701
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական ծխական «Եղնիկեան» միդասեան արականաց ուսումնարանի Ս. Խաչ եկեղեցւոյ Հայոց Կոզբ գեղջ բարեկրօն Առաքել քահանայն Կարապետեան և պատուելիք՝ երեցփոխան Յակոբն Տէր Մկրտչեան և Կարապետն Տէր Սահակեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ընդդիս ի 20 Նոյեմբ. ընդ համարաւ 702
հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական - ծխական միդասեան արականաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Համամլու գեղջ բարեկրօն Աւագ քահանայն Տէր Սիմէոնեանց և պատուելիք երեցփոխան Պետրոսն Ենգամեանց և Դանիէլն Տէր Յովսէփեանց։

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 20 Նոյեմբ. ընդ համարաւ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միպատեան արականաց ուսումնարանի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ Հայոց Իլի-Վարաքիլիսա գեղջ՝ բարեկրօն Յովհաննէս աւագ քահանայն Տէր Մկրտչեանց և պատուելիք՝ երեցփոխան Մկրտիչն Յարութիւնեանց և Զաքարիան Տէր Յարութիւնեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 20 Նոյեմբ. ընդ համարաւ 704 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միպատեան արականաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Հոռոմ գեղջ՝ բարեկրօն Միլբիսեղէկ քահանայն Արգարեանց և պատուելիք՝ երեցփոխան Գրիգորն Յարութիւնեան և Մատթէոսն Պողոսեան Ջուլֆիեանց։

(Ի ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

29 Սեպտեմ. Նոր Նախիջևանցի Հանգուցեալ Յովհաննէս Մարկոսեան Պապովեանի կտակեալ Մայր Աթոռոյս 500 բուրլին յարգոյ կտակակատարները յայտարարութեամբ ուղարկած լինելով յանուն Վեհափառ Կաթուղիկոսի ազգիս, Նորին Վեհափառութիւնը մակագրութեամբ յանձնեց Սինօդին տնօրինել զարժանն և տեղեկութիւն տալ նաև յարգոյ կտակակատարներին։

—

17. Սեպտեմ. Սինօդը Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանի Կոնսիստորիայի յայտարարութեամբ տեղեկանալով որ Նոր-Նախիջևանի Ս. Նիկողայոս Եկեղեցու Երեսփոխան Սրմաքէշեանն առանց հոգևոր իշխանութեան թոյլտուութեան ծախսեր է արել, և նոյն պարտաւորութիւնը անուն և միւս երեսփոխանք՝ յանուն բոլոր կոնսիստորիաների շրջաբերական հրամանով պատուիրուած էր որ Երեսփոխանք առանց հոգևոր իշխանութեան թոյլտուութեան իրաւունք չունենան ինքնագլուխ ծախսեր անել, բացի սովորական ծախսերից և թեթև կարկատաններից՝ որի (կարկատանների) ծախսը տարին երեսուն բուրլուց աւելի պէտք է չլինի։

—

8 Սեպտեմ. Դաւիթ Աւագ քահանայ Եարալեանց տարւոյս Օգոստոս 27-ին ներկայացրած լինելով յօգուտ Ճեմարանի տարւոյս երկրորդ քառամսեակի համար տասն բուրլի, Սինօդը հրամայեց գանձապահին գրել մուտք աթոռային արդեանց տոմարում և տալ տեղեկութիւն յիշեալ աւագ քահանային։

—

3 Սեպտեմ. Սինօդը վաւերացրեց Աստրախանի Կոնսիստորիայի վճիռը՝ որով յիշեալ Կոնսիստորիան երկամեայ եկեղեցական ապաշխարանաց և յօգուտ Ճեմարանի Մայր Աթոռոյ 200 բուրլի տուգանաց է ենթարկում Ստաւրապոլի Թարգուշիմէոս քահանայ Բէկուլեանցին, նորա՝ շնասական ատիճանում եղող Նոր Արմաւիրցի Նիկողայոս Պարոնեանցի և Գէորգ Համբարձումեան Ալլահվերդեանցի պսակները կատարելուն համար։ Իսկ պսակեալները իրանց ամուսիններով ենթարկուած են միամեայ եկեղեցական ապաշխարութեան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՆՇԱՆԱԿՈՒՂԻՍ ԼԶԱՐԵԱՆՑՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.